ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ԱՐՄԵՆ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Քոչարյան,

ի պատասխան Ձեր 04.08.2025թ. հ. 181-2025թ. գրության՝ տեղեկացվում է.

Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի միասնական տոմսային համակարգի տրանսպորտային քարտերը չեն վաճառվում: Դրանք «Թելսել» ընկերությունը տրամադրում է ուղևորներին հասարակական տրանսպորտում կիրառելու նպատակով: Քարտերը բազմակի օգտագործման համար են նախատեսված, ուստի ուղևորների կողմից դրանց խնամքով վերաբերելու համար քարտերը տրամադրվում են երաշխիքային գումարի դիմաց (դեպոզիտ՝ 500 ՀՀ դրամ): Քարտը վերադարձնելու դեպքում քաղաքացին հետ է ստանում վերոնշյալ գումարը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ